

ԷՄ. Ա. ՊԻՎԱԶՅԱՆ, Միլիթար Գոշի «Դատաստանագրքի» բանասիրական
 ԲՆԵՈՒԹՅՈՒՆ, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1987, 225 էջ:

Միջնադարյան հայոց մշակույթի ականավոր երախտավոր Մխիթար Գոշի (+1213) մահ-
 նագրական ռազմարնույթ ժառանգությունը վաղուց ի վեր գտնվում է հետազոտողների ուշա-
 դրույթյան կենտրոնում: Հայ ժողովրդի մեծ զավակի ստեղծագործության նկատմամբ չղաղաբող
 հետաքրքրությունն օրինաչափորեն պայմանավորված է իր ժամանակի Հայաստանի պատ-
 մամշակութային կյանքի ամենատարբեր բնագավառների մասին նրա պարունակած հիրավի դժ-
 վար գերագնահատելի նյութով: Մխիթար Գոշի գլուխգործոցը նրա «Դատաստանագրքին» է,
 որին դիմել է դիմում են զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի Հայաստանի պատմության ամե-
 նատարբեր պրոբլեմներով զրադված կամ զրադվող գիտնականները: Դրանց թվում են այնպիսի
 հեղինակություններ, ինչպիսիք են Մ. Բրոսեն, Ղ. Ալիշանը, Վ. Բաստամյանցը, Ս. Եղիազարովը,
 Յո. Կարստը, Ն. Ակինյանը, Մ. Աբեղյանը, Խ. Սամվելյանը և ուրիշներ, որոնք զրախոսվող աշ-
 խատության խնդրո առարկա հուշարձանը ենթարկել են իրավագիտական, բանասիրական և այլ
 կարգի քննության: Այդուհանդերձ, ինչպես ճիշտ նկատել է էմ. Պիվազյանը, «Դատաստանա-
 գրքի» հետ կապված բանասիրական մի շարք խնդիրներ, որոնք էական նշանակություն ունեն և
 ելակետ են հանդիսանում Դատաստանագրքի ստեղծման պատմության, հեղինակային ընթացի-
 վերականգնման, բովանդակության ուսումնասիրության և այլ հարցերի լուսարանման համար, ոչ
 միայն չեն պարզարանվել, այլև ավելի ևս մթափնվել ու խառնաշփոթվել են» (էջ 4): Հենց
 այդ հարցերի մի ստվար խմբի պարզեցման ու կարգավորման նպատակ է հետապնդել արդի
 հայագիտության ճանաչված ու վաստակավոր մշակներից մեկը՝ էմ. Պիվազյանը, ընթերցողի
 դատին հանձնելով իր՝ տարիների տքնաշան պրպտումների արգասիքը: Նկատենք, որ հեղինակն
 իր առջև դրված խնդիրների լուծմանը ձեռնամուխ է եղել ոչ թե նոր նյութերի հիման վրա
 (այդպիսիք բացակայում են), այլ եղածի և անուրանալի պատմաբանասիրական, աղբյուրագի-
 տական, տեքստաբանական գիտելիքների ու գրաբարի փայլուն իմացության շնորհիվ մանրա-
 զնին քննությամբ հանգել է մի շարք նորովի և, որ կարևոր է, հիմնավոր ու բնդունելի եզրահան-
 գումներին:

Գրքում արծարծված կարևոր խնդիրներից է «Դատաստանագրքին» խմբագրությունների հար-
 ցը, որը ելակետ է այդ հուշարձանի հետ կապված այլ կնճոտ հարցերի պարզարանման համար:
 «Դատաստանագրքին» խմբագրությամբ կամ մասամբ ընգրկող մեզ հասած շուրջ 50 ձեռա-
 գրերը բաժանվում են երեք խմբի կամ խմբագրությունների, որոնք պայմանականորեն ընգոմ-
 ված է անվանել Ա, Բ, Գ: Այս իրողությունն օրինաչափորեն դրել է դրանցից հեղինակային
 զատորոշման մի շարք առումներով ոչ երկրորդական խնդրը: «Դատաստանագրքին» քննական-
 համեմատական հրատարակությունն առաջինն իրագործած Վ. Բաստամյանցը հեղինակային է հա-
 մարել Բ խմբագրությունը: Այդ տեսակետին են նաև Յո. Կարստն ու Ն. Ակինյանը: Սակայն այլ
 հետազոտողներ (Ղ. Ալիշան, Ս. Կոզյան և ուրիշներ) հեղինակային են համարել Ա խմբագրու-
 թյունը: Ղ. Ալիշանը, օրինակ, վենետիկի Մխիթարյան մատենադարանի Ա խմբագրությանը պատ-
 կանող № 1237 ձեռագիրը՝ «Դատաստանագրքին» մեզ հասած 4 հնագույն ձեռագրերից մեկը, հա-
 մարել է Մխիթար Գոշի ինքնագիրը և դրանով իսկ տրամաբանորեն հանգել Ա խմբագրությանը
 հեղինակային լինելու գաղափարին: Որոշ ուսումնասիրողներ էլ հեղինակային են համարել թե՛ Ա
 և թե՛ Բ խմբագրությունները:

«Դատաստանագրքին» հնագույն ձեռագրերի ու դրանց հիշատակարանների ռադմապլան
 տեքստաբանական ու պատմաբանութիրական շահեկան քննությամբ էմ. Պիվազյանին հաղողվել
 է պարզել, որ վենետիկյան նշված ձեռագիրը ոչ հեղինակային է և ոչ էլ հեղինակի հսկողու-
 թյամբ է սրբագրված, ինչպես կարծել է Վ. Հովհաննիսյանը: Դրա համար, ի թիվս այլ կոմպեն-
 ների, հայագետի համար հիմնավոր փաստարկ է ծառայել «Դատաստանագրքին» այդ, ինչպես
 նաև Ա խմբագրությանը պատկանող բոլոր ձեռագրերի ՃԺԳ (Բ խմբագրության ՄԻԵ) «Յաղագս
 զատաստանաց կարգաց եկեղեցույ և տան թագաւորի» խորագրով կանոն-հոգվածը, որտեղ շեշտ-

վում է, թե Եկեղեցական աստիճանակարգում «...վերագոյն քան զամենեանս՝ պապիոս որ այժմ կոչեն Գրանկը պապ...»։ Ինչպես տեսնում ենք, այստեղ շեշտվում է Հռոմի պապի գերագահությունը, ինչը մեղ հասած բաղձաթիվ անհերքելի վկայություններով հայ աղգային Եկեղեցու և տանգուն պաշտպան ու սյուն Մխիթար Գոշր երբեք չէր ընդունի։ Այս հանգամանքը Վ. Բաստամյանցի ժամանակին ոչ միայն նկատել է, այլև ցույց տվել, որ գործ ունենք բնագրային անհմուտ կեղծման հետ։ Թվում էր, թե այս դիտարկումը չպետք է տարակարծությունների տեղիք տար, սակայն համեմատաբար վերջերս Ս. Կոզյանը, ակնհայտորեն առաջնորդվելով սուրբեկտիվ նկատառումներով, փորձեց վիճարկել այն։ Այս հանգամանքը գրախոսվող աշխատության հեղինակին ստիպել է կրկին անդրադառնալ այդ խնդրին և կետ առ կետ հիմնովին հերքել Զաքարի տմիրսպասալարի բաղկեղտնական լինելու և այդ հիման վրա Մխիթար Գոշր՝ իրեն նրա խոստովանաբար, դարձյալ երկարակ և ի վերջո քննվող կանոն-հոգվածը բնագրային հանդիսանալու մասին Ս. Կոզյանի բերած փաստարկները։ Ոգտվելով առիթից, ուշադրություն հրավիրենք էմ. Պիվադյանի իրավագիտությունը հավաստող ևս մի կարևոր, բայց ցարդ հանիրավի անտեսված էական հանգամանքի վրա։ Հայ առաքելական եկեղեցու արարողակարգում փոփոխություններ մտցնելու (իրականում հաճախ հինը վերականգնելու կամ եղածը փաստագրելու) ուղղությունը Զաքարի տմիրսպասալարի գործադրած համառ ջանքերը ոչ թե նրա բաղկեղտնական լինելու և կամ թե այդ դավանանքին նրա տուրք տալու արտահայտություն են, այլ օտար տիրապետության պայմաններում հայ եկեղեցու խեղաթյուրված արարողակարգը վերականգնելու հանապարհով այն մեր ժողովրդի ծավալվող ժողովրդաազատագրական պատերազմի շահերին ծառայեցնելու արդարացված ձգտում։ Միայն այդպիսի և ոչ թե Ս. Կոզյանի կարծած նկատառումներով էր առաջնորդվում իր ժողովրդի շահերը քաջ գիտակցող ու սթափ մտածող պետական գործիչ Զաքարի տմիրսպասալարը։

Ենելով վերոհիշյալից էմ. Պիվադյանը Եղրակացնում է, որ «Դատաստանագրքին մեղ հասած ձևապրերից ոչ մեկն էլ հեղինակային չէ և որ դրանք առանց բացատրության ծագում են այդ եղծումն ունեցող մեկ «այր ձևապրից»։ Եվ քանի որ հեղինակը զուտ քանասիրական հետազոտության նպատակ է հետապնդել, Եղծման տեղի և ժամանակի պարզարանման հարցերը մնացել են առկախ, որոնց լուծմանը պիտի ձեռնամուխ լինեն «Դատաստանագրքին» այլ տեսանկյունով դիտարկողները։

Մատաստանագրքին բոլոր խմբագրությունները մեկ՝ արդեն եղծված մայր ձևագրից ծագած լինելու իրողությունը հեղինակին թույլ է տվել նորովի քննելու նրա հնագույն ձևագրերի հիշատակարաններն ու ընծայականները և պարզելու այդ խմբագրությունների հետ սերտորեն աղերսված մի շարք խնդիրներ։ Համադիր քննությունը էմ. Պիվադյանին բերել է այն համոզման, որ վենետիկյան № 1237 ձևագրում «Դատաստանագրքին» տեքստին հաջորդող հիշատակարանը և Զմմառի վանքի № 180 ձևագրի՝ կաթողիկոս Գրիգոր Տղային ուղղված ընծայականը ոչ թե հեղինակային են, այլ հորինվել են ընդօրինակողի կողմից և, հետևաբար, անվավեր են։

Գրախոսվող աշխատության մեջ ոչ նվազ կարևոր տեղ է գրավում «Դատաստանագրքի» ստեղծման ժամանակի վիճահարույց խնդիրը։ Այստեղ ևս հետազոտողը մտքի է իր ծանրակշիռ լուծման, նոր փաստարկներով Վ. Բաստամյանցի հետևություններ 1184-ը ընդունելով իրեն «Դատաստանագրքին» ոչ թե ստեղծման, այլ շարադրումը սկսելու թվական, միաժամանակ նկատելով, որ Մխիթար Գոշր իր նշանավոր երկասիրության վրա աշխատել է երկար տարիներ։ Այս դրույթը դժվար է վիճարկել, և թե նկատի առնենք այն անմիջական հանգամանքը, որ «Դատաստանագրքին» ապացուցիչ ճշգրտություններ արտացոլում է ժամանակի սոցիալ-տնտեսական ու իրավաբանական այն պայմանների պահանջները, որոնք սկսեցին ուրվագծվել Զաքարյանների գլխավորությամբ ու վրաց Բագրատունիների հովանավորությամբ Հյուսիսային Հայաստանի ազատագրման ընթացքում և իրենց վերջնական ձևավորումը ստացան սելջուկյան լուծը թափափելուց և Զաքարյան Հայաստանը ֆեոդալական ենթակայության սկզբունքով վրացական պետության կազմի մեջ մտնելուց հետո։ Իսկ այդ պրոցեսը, ինչպես հանրահայտ է, սկսվեց 1191 թ. ոչ շուտ և հիմնականում ավարտվեց XIII դ. առաջին տասնամյակում։ Այս պայմաններում Մխիթար Գոշր նման հանձարեղ մտածողն անգամ ի զորու չէր լինի 1184 թ. այդօրինակ ճշգրտությամբ օրենսդրորեն ամրագրելու ոչ տեսանելի ապագայում իր մայր հայրենիքի կյանքի առանց բացառության բոլոր ոլորտներում տեղի ունենալիք և հաճախ հինը լիովին բացառող խոր հեղափոխություններ։ Ավելին, «Դատաստանագրքին» և նրա աղբյուրների համեմատության արդյունքներն ու մի շարք այլ ուղղակի և անուղղակի կոմպաններ համառորեն ստիպում են մտածել, որ ակա-նավոր օրենսդրին իր աշխատությունը հեղինակելիս բազմիցս կանգնած է Եղել արդեն շարա-

դրված տեքստում խմբագրական բնույթի սրբագրումներ կատարելու ստիպողական անհրաժեշտության առաջ, ինչը և արել է:

Այստեղ հարկ է հաշվի առնել նաև հետևյալը. եթե նախորդ փուլում հայ ժողովրդի մզաօհակապարարական ժողովրդագրատաճարական պատերազմի կենտրոնը հայոց միջնաշխարհն էր, ապա հակասելուկյան նույնարևույթ պատերազմի հենակետը դարձան Բագրատունյաց շրջանում գերիշխող ֆեոդալական անշատողականության պայմաններում կենտրոնախույս ձեռնարկները դրսևորած Գուգարբը և հայկական Աղվանքը (Ուտիք, Արցախ): Այս շրջանները հակասելուկյան պայքարի հենակետ դառնալը պայմանավորված էր հիմնականում հետևյալով. ա) հզորացող Վրաստանի հետ անմիջական հարևանությամբ, բ) հայ պետականության մեացորդների փոքրիշատե պահպանմամբ, որոնցում օտար տիրապետության հետևանքով ֆեոդալական անշատողականությունը վերաճել էր իր հակասությանը, գ) ի դեմս Աղվանից կաթողիկոսության նշված հայկական տարածքներում հայոց միասնական հոգևոր կենտրոնի առկայությամբ: Վերոգրյալը թույլ է տալիս պատասխանելու «Պատաստանագրքի» ստեղծման տեղի, ժամանակի ու հետապնդած նպատակների հետ կապված մի շարք հարցերի, որոնք վերջին տարիներին որոշ նորահայտ ազդանագետները վերածել են շահարկման առարկայի:

Էմ. Պիվադյանի ուշադրությունից չեն վրիպել նաև առակներն ու «Պատաստանագրքը» Մխիթար Գոշի գրչին ըպատկանելու մասին համապատասխանաբար Ն. Մառի և Ն. Ակինյանի ժամանակին հայտնած տեսակետները, որոնց հիմքում գլխավորապես բնկած է կիրակոս Գանձակեցու կողմից Մխիթար Գոշի երկառիւրությունները թվարկելիս դրանք անտեսելու իրողությունը: Համապատասխան հետազոտության շնորհիվ բացահայտելով առակներում, «Պատաստանագրքում» ու Մխիթար Գոշի մյուս աշխատություններում շոշափված խնդիրների, հայացքների, մտածողության ձևերի նույնականությունները, արտահայտությունների նմանությունները (ոչ սակավ՝ բառացի) և բերելով ձեռագրական մի շարք այլ անժխտելի փաստարկներ, հեղինակին հաջողվել է կանխել ևրկու խոշոր հայագետների կողմից Մխիթար Գոշի մատենագրական ժառանգության ոչնչով շարդարացված աղքատացումը:

Գրախոսվող աշխատության մի ստվար հատվածը նվիրված է «Պատաստանագրքի» աղբյուրներին: Բանավեճի առարկա այս խնդրում ևս հեղինակին հաջողվել է ասել իր համոզել խոսքը: Հետազոտությունը նրան բերել է այն մտքին, որ «Պատաստանագրքը» ստեղծելիս Մխիթար Գոշն օգտվել է ինչպես բանավոր (ավանդական, սովորութական, հայ և օտար դատական պրակտիկա), այնպես էլ գրավոր աղբյուրներից, որոնցում առաջնահերթ տեղ են գրավում Աստվածաշունչը, Հայոց կանոնագիրքը և Դավիթ Ալավկա որդու կանոնները: Ընդ որում, նա դրանցից օգտվել է ստեղծագործաբար, քաղված ամեն մի օրենք ու կանոն խստիվ հարմարեցնելով իր ժամանակի և միջավայրի պահանջներին: Եվ հեղինակը միանգամայն իրավացի է՝ դրանում տեսնելով Մխիթար Գոշի, իրեն մտածողի մեծությունը: Այնուհետև, էմ. Պիվադյանը պատշաճ հետազոտական հենքի վրա, կարծում ենք՝ հիմնավորապես, հերքել է այն կարծիքը, թե Մխիթար Գոշը «Պատաստանագրքը» կազմելիս օգտվել է նաև ասորա-հոմանական դատաստանագրքից, հունարյուզանդական օրենքներից և աղվանական կանոններից:

Գրախոսվող աշխատությունում արծարծված ոչ պակաս կարևոր հաջորդ խնդիրը «Պատաստանագրքի» հեղինակային խմբագրության որոշումն է: Այն, ինչպես վերը նշվեց, տասնամյակներ շարունակ հետազոտողների անգիշում բանավեճի առարկա է: Լրացուցիչ բնագրագիտական քննությամբ էմ. Պիվադյանը հեղինակային է դիտել Եկեղեցական կանոնը և Աշխարհական կանոնք մասերի բաժանված Բ խմբագրությունը, նշելով, թե «այդ խմբագրությունն է, որ համապատասխանում է հեղինակի մտադրությանն ու ծրագրին և բավարարել է ժամանակի՝ աշխարհիկ օրենսդրություն ունենալու Տրամալական դարձած պահանջը» (էջ 233): Այստեղ տեղին է նկատել, որ նման բաժանում շունեցող Ա խմբագրությունը հեղինակային համարելիս կամ թե ահա՛նա Մխիթար Գոշի վասնակը ոչ միայն նվազեցվում է, այլև նա հանիրավի զրկվում հայ աշխարհիկ օրենսդրության հիմնագրի աներկբայորեն իրեն պատկանող պատվից:

Վերջում էմ. Պիվադյանն իրեն իր հետազոտության տրամաբանական արգասիք դրել է «Պատաստանագրքի» գիտաքննական նոր բնագրի ստեղծման խնդիրը, գտնելով, որ «Պատաստանագրքի» հեղինակային բնագիրը, այն մայր օրինակը, որից ծագել են խմբագրությունները, վեքականգնելու նպատակով գիտական-քննական շնագիրը պետք է պատրաստել հիմքում դնելով սասերի բաժանված խմբագրությունը, միաժամանակ հաշվի առնելով մյուս խմբագրությունների տվյալները, քանի որ հաճախ չիշտ, հեղինակային բնագրերումներ պահպանվել են դրանց մեջ» (էջ 233):

Արդեն ասվեց, որ գրախոսվող աշխատությունը «Դատաստանագրքի» հետ կապված և տասնամյակների չնոթությամբ ոչ միայն չպարզված, այլև ավելի խճճված մի շարք հարցերի լուծման նպատակ է հետապնդել: Դա, բնականաբար, հեղինակին ստիպել է բանավեճի մեջ մտնել այս կամ այն հետազոտողի հետ: Ի պատիվ էմ. Պիվազյանի հարկ է նկատել, որ նա իր տեսակետների ճշտությունն ապացուցելու զօգնություն ճանապարհին ի հայտ է բերել անաչառ վերաբերմունք՝ ընդդիմախոսների գիտական վաստակի ու կարողությունների նկատմամբ:

Ուր գրախոսվող աշխատությունը «Դատաստանագրքի» բանասիրական քննության ընազավառում նոր, որակական քայլ է, անվիճելի է: Սակայն նրա արժանիքները միայն այդ շրջանակով սահմանափակվելն անարդարացի կլինի: Հեղինակի հետազոտության որոշ արդյունքներ օբյեկտիվորեն գալիս են ապացուցելու XII—XIII դդ. հայ իրականության ու մշակույթի մեջ ազդանական տարրեր գտնելու ուղղությամբ պատմության երգվյալ կեղծարար ու պոեֆեսիոնալ բանագրող Զ. Բուսիյանովի և նրա հետևորդների վերջին շրջանում գործազրպե համառ ջանքերի ողջ սնանկությունը էմ. Պիվազյանի աշխատությունը նրանց կրկին ու կրկին հիշեցնում է, որ Մխիթար Գոշյ, հայ իր և՛ ծագումով, և՛ ազգությամբ, և՛ դավանանքով և թե գործունեությամբ ու մտածողությամբ ու գրա արդյունք հանդիսացող իր գրական ժառանգությամբ, և որ պատմական իրականության վերհանձան միակ միջոցը ոչ թե նպատակադիր ու հետևարար միջոցների միջև խտրություն չգնող «հետադոտություն» է, այլ անկասակալ և փաստերի տրամաբանությանը ստորադասվող ուսումնասիրությունը: Այդ իսկ պատճառով լավ կլինի, եթե գիրքը հրատարակվի նաև ռուսերեն, միովհենակե ընթերցողին հնարավորություն տալով կողմնորոշվելու, թե որն է ճշմարտությունը:

Աշխատատար և հեղինակից շատ ջանք պահանջող յուրաքանչյուր աշխատության նման՝ գրախոսվող գիրքը զերծ չէ նաև որոշ թերություններից: Առուցվածքային առումով առավել նպատակահարմար կլիներ, եթե «Դատաստանագրքի» և առակների հեղինակը Մխիթար Գոշյն է՝ վերտառությամբ գլուխը դրված աշխատության սկզբնամասում: Գրքում տեղ են գտել նաև սրբագրական և փաստական բնույթի որոշ վրիպակներ: Այսպես, օրինակ, Զաքարյանները Գանձակը շին գրավել, մեծ Սարգիս Զաքարյանի մահվանից հետո ամիրսպասալարության պաշտոնը անցել է ոչ թե Գամրեկն Թորելուն, այլ Զիաբերին և այլն:

Ամփոփենք էմ. Պիվազյանի տարիներ ջանքեր լիովին փոխհատուցվել են: Հայագիտությանը հարստացել է մի շահեկան աշխատությամբ, որը Մխիթար Գոշյի ստեղծագործության հետագա ուսումնասիրության ու արժեքավորման ընազավառում նոր ուղենիշներ է բացում:

ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱՋԱՐՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու